# ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

**Ստեփանակերտ, 16 սեպտեմբերի** – *Սեպտեմբերի 15-ին ԼՂՀ իշխանությունները, այս տարվա օգոստոսին Մոսկվայում ձեռք բերած պայմանավորվածության համաձայն, միակողմանիորեն Ադրբեջանին վերադարձրին 24 կնոջ ու երեխայի, որոնք ժամանակին ղարաբաղյան ուժերի կողմից դուրս էին բերվել ռազմական գործողությունների գոտուց: Փոխանակումը իրականացվել երկու հանրապետությունների ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների հարցերով պետական հանձնաժողովների կողմից Միջազգային Կարմիր խաչի միջնորդությամբ: Ինչպես տեղեկացրել ԼՂՀ պետական հանձնաժողովի նախագահ Ալեքսանդր Առստամյանը, այսպիսով ղարաբաղյան կողմը վերադարձրեց իր մոտ գտնվող ադրբեջանցի վերջին կանանց ու երեխաներին: Նա հույս հայտնեց, որ Ադրբեջանը կգիմի պատասխան քայլի և կվերադարձնի իր մոտ գտնվող բոլոր հայազգի կանանց ու երեխաներին:*

**«ՓԱՍՏ–ՄՈՒՆՔ»**